ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/15/2026

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 03 փետրվարի 2026թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2026 թվականի փետրվարի 03-ին քննելով Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի օգնական Անժելիկա Լաերտի Ղազարյանի ընտանիքի անդամ Հարություն Գագիկի Հարությունյանի կողմից պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/15/2026 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I.Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթների շրջանակում, «Հանրային

ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ նաև Օրենք) սահմանված հայտարարագրերը, մասնավորապես՝ պաշտոնատար անձանց ընտանիքի անդամների 2023 թվականի տարեկան հայտարարագրերը Օրենքով սահմանված ժամկետում ներկայացված լինելու փաստի ստուգման արդյունքում պարզել է, որ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի օգնական Անժելիկա Լաերտի Ղազարյանի ընտանիքի անդամ Հարություն Գագիկի Հարությունյանի 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագիրը ներկայացված չէ Հանձնաժողով:

1.2 Հանձնաժողովի կողմից 2025 թվականի նոյեմբերի 10-ին և նոյեմբերի 17-ին թիվ 01/4354/19-2025 գրությունը «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածի հիման վրա սահմանված անհատական ծանուցման ընթացակարգով՝ էլեկտրոնային փոստով, ուղարկվել է Հարություն Հարությունյանին՝ տեղեկացնելով Հայտարարագիրը ներկայացնելու պարտականության վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, լրացնել և ներկայացնել համապատասխան հայտարարագիրը: Միաժամանակ, Հարություն Հարությունյանը ծանուցվել է, որ հայտարարագիրը 30 օրվա ընթացքում չներկայացնելու դեպքում, անհրաժեշտ է ծանուցումը ստանալուց հետո՝ 31-րդ օրը՝ ժամը 10:55-ին, ներկայանալ Հանձնաժողով՝ մասնակցելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնգօրյա ժամկետում Հանձնաժողովը չի ստացել էլեկտրոնային փոստով ուղարկված ծանուցումը Հարություն Հարությունյանի կողմից կարդալու մասին էլեկտրոնային հավաստում, և հիշյալ ժամկետում Հարություն Հարությունյանը չի լրացրել Հայտարարագիրը՝ ծանուցումը փոստային կապի միջոցով՝ պատվիրված նամակով ուղարկվել է Հարություն Հարությունյանի՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված հասցեով:

1.3 Հիմք ընդունելով «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումները՝ ծանուցումը 2025 թվականի նոյեմբերի 24-ին տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային (www.azdarar.am) կայքում, որից հետո՝

տասներորդ օրը՝ 2025 թվականի դեկտեմբերի 4-ին, ծանուցումը համարվել է հանձնված (ստացված):

1.4 2026 թվականի հունվարի 05-ին պատշաճ ծանուցված Հարություն Հարությունյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ 526/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.5 2026 թվականի հունվարի 07-ի թիվ 01/20-4-2026 գրությամբ Հարություն Հարությունյանը գրավոր ծանուցվել է այն մասին, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման վերաբերյալ 2026 թվականի հունվարի 27-ին ժամը՝ 13:00-ին, նշանակվել է գործի քննություն, որը 01/43/1-2026 գրությամբ տեղափոխվել է 2026 թվականի հունվարի 27-ին ժամը՝ 15:05-ին (Հարություն Հարությունյանը ծանուցվել է էլեկտրոնային փոստի միջոցով, ինչի մասին առկա է հետադարձ հավաստում):

1.6 Հանձնաժողովի կողմից 2026 թվականի հունվարի 20-ին թիվ 01/160-4-2026 գրությամբ Հարություն Հարությունյանին ծանուցում է ուղարկվել, որ վերոնշյալ առերևույթ իրավախախտման հիմքով կազմված արձանագրության և վերաբերելի նյութերի հիման վրա նշանակված գործի քննության օրը տեղափոխվել և նշանակվել է 2026 թվականի փետրվարի 3-ին, ժամը՝ 11:30-ին: Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին քննության տեղի, օրվա և ժամի վերաբերյալ ծանուցված լինելու մասին Հարություն Հարությունյանի կողմից ուղարկվել է հետադարձ հավաստում:

1.7 2026 թվականի փետրվարի 03-ին Հարություն Հարությունյանի և իր ներկայացուցիչ Հեղինե Մանուկյանի ներկայությամբ տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

1.8 Գործի քննության ընթացքում Հարություն Հարությունյանի ներկայացուցիչ Հեղինե Մանուկյանի կողմից Հանձնաժողով է ներկայացվել վարչական իրավախախտման վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումները ու պարզաբանումները

Հարություն Հարությունյանի ներկայացուցիչ Հեղինե Մանուկյանի կողմից ներկայացվել է գրավոր դիրքորոշում հետևյալ բովանդակությամբ (այսուհետ՝ նաև Դիրքորոշում).

«(...) Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանրային ծառայության մասին» և «Կուսակցությունների մասին» օրենքներով սահմանված հայտարարագիր հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից (սույն հոդվածում այսուհետ՝ հայտարարատուներ) «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագրերը (սույն հոդվածում այսուհետ՝ հայտարարագրեր) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Նշված անձինք պաշտոնավարման ընթացքում տարեկան հայտարարագրերը ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը:

Վկայակոչված իրավակարգավորումների համադրված վերլուծությունից հետևում է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքը նույն օրենքով նախատեսված հայտարարագրերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանում պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերի դեպքում՝ այդ օրերին հաջորդող 30-րդ օրը, իսկ տարեկան հայտարարագրերի դեպքում՝ տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը: Ուստի ակնհայտ է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28 հոդվածի 1-ին մասով սահմանված պատասխանատվությունը կարող է վրա հասնել միայն նշված ժամկետներին հաջորդող 30 օրվա ընթացքում հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա հայտարարագիր չներկայացնելու դեպքում:

Իրավակարգավորման հակառակ մեկնաբանության դեպքում՝ կստացվի, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, որպես իրավասու պետական մարմին կաշկանդված չէ որևէ ժամկետով և ցանկացած ժամանակ կարող է ենթադրյալ իրավախախտ անձին ծանուցել հայտարարագիր ներկայացնելու պարտավորության մասին, ինչը չի կարող բխել իրավական որոշակիության սկզբունքից:

Տվյալ դեպքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 07.01.2026թ. թիվ 01/20-4-2026 ծանուցման բովանդակությունից ակնհայտ է, որ առերևույթ իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը հարուցվել է պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2023 թվականի գույքի և եկամուտների հայտարարագիրը Հանձնաժողով չներկայացնելու առթիվ:

Մինչդեռ, վկայակոչված իրավական դիրքորոշման և սույն գործի փաստերի համադրումից ակնհայտ է, որ 2023 թվականի գույքի և եկամուտների հայտարարագիր ներկայացնելու պարտավորությունը հայտարարատու պաշտոնատար անձի համար օրենքի ուժով սահմանված է եղել մինչև 2024 թվականի մայիսի 31-ը, հետևաբար նշված ժամկետում չներկայացված հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը կարող էր պահանջել միայն նշված ժամկետի ավարտից հետո 30 օրվա ընթացքում, և նույն ժամկետում հայտարարատու պաշտոնատար անձի կողմից չներկայացնելը կարող էր Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28 հոդվածի 1-ին մասի իմաստով համարվել իրավախախտում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ նույն օրենսգրքի 169.28-րդ և 169.31-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Վերոգրյալից ակնհայտ է, որ հիշյալ հոդվածով սահմանված մեկ տարվա ժամկետի հաշվարկը սկսվում է «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագրերը ներկայացնելու ժամկետի ավարտին հաջորդող 30 օրվա ժամկետի ավարտից հետո, այսինքն՝ տվյալ դեպքում 2024 թվականի մայիսի 31-ին հաջորդող 30 օրվա ժամկետի ավարտից հետո:

Բացի այդ, հարկ է նշել, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, սահմանելով հայտարարագրման ժամկետները, կարգավորում է միայն հայտարարատու պաշտոնատար անձի կողմից հայտարարագիր ներկայացնելու ժամկետները:

Նույն օրենքում օգտագործվող հասկացություններից ակնհայտ է, որ օրենքը տարբերում է հայտարարատու պաշտոնատար անձ և հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ հասկացությունները: Մասնավորապես, հայտարարատու պաշտոնատար անձ հասկացությունը օրենսդիրը բացահայտում է օրենքի 34-րդ հոդվածի 1-ն մասում, իսկ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձինը՝ նույն հոդվածի 8-րդ մասում՝ այդպիսիք համարելով հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամներին:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 36-րդ հոդվածի բովանդակությունից՝ պարզորոշ հետևում է, որ օրենսդիրը կարգավորում է միայն հայտարարատու պաշտոնատար անձի կողմից հայտարարագրեր ներկայացնելու ժամկետները, իսկ պաշտոնատար անձի ընտանիքի անդամի մասով այդ հոդվածը, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի որևէ այլ հոդված, ժամկետ չի սահմանում:

Հետևաբար՝ քանի որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28 հոդվածի 1-ին մասով սահմանված իրավախախտման դեպքի առկայությունը օրենսդիրը պայմանավորում է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված հայտարարագիր ներկայացնելու ժամկետների հետ, ուստի պաշտոնատար անձի ընտանիքի անդամի մասով այդպիսի ժամկետի բացակայության պայմաններում հիշյալ հոդվածով նախատեսված սանկցիան չի կարող կիրառելի լինել վերջիններիս նկատմամբ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28 հոդվածի 1-ին մասը, թեև պատասխանատվություն է նախատեսում հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից (որպիսին տվյալ դեպքում հանդիսանում է Հ.Հարությունյանը) նույն մասով սահմանված գործողությունները չկատարելու համար, այնուամենայնիվ, վերոգրյալից ակնհայտ է, որ հայտարարատու չհանդիսացող, սակայն հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձը իրավակարգավորման բովանդակությունից չի կարող հստակ պատկերացում կազմել, որ որոշակի վարքագիծ

դրսևորելու դեպքում նա ենթակա կլինի պատասխանատվության, ուստի նշված նորմը չի կարող համապատասխանել իրավական որոշակիության պահանջին, հետևաբար՝ նաև չի կարող հանդիսանալ պատասխանատվության կիրառման իրավական հիմք:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե հայտարարագրերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովը հանգում է եզրակացության, որ հայտարարագիրն օրենքով սահմանված ժամկետում ներկայացված չէ կամ ներկայացված է համապատասխան պահանջների կամ կարգի խախտմամբ, կամ հայտարարագրված տվյալը սխալ է կամ ոչ ամբողջական, ապա հարուցում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

Նույն օրենքի 41.1 հոդվածի համաձայն՝ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իրականացվող վերլուծության և վարույթների շրջանակում անձին ծանուցում է «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով կամ թղթային կամ էլեկտրոնային եղանակով կամ ծանուցվող անձի մասնակցությամբ՝ այդ մասին փաստաթուղթ կազմելով, կամ ծանուցվողի համաձայնությամբ՝ այլ եղանակով: Թղթային ծանուցումը հանձնվում է անմիջականորեն կամ փոստով՝ ծանուցվող անձի կողմից հայտարարագրում կամ դիմումում նշված հասցեով: Էլեկտրոնային ծանուցումն ուղարկվում է ծանուցվող անձի նշած էլեկտրոնային փոստի հասցեով կամ հեռախոսահամարին: Էլեկտրոնային ծանուցումը պատշաճ է, եթե առկա է էլեկտրոնային ծանուցումն ստանալու մասին էլեկտրոնային հավաստում:

Վկայակոչված իրավակարգավորումների և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28 հոդվածի 1-ին մասի համադրված վերլուծությունից հետևում է, որ ցանկացած դեպքում, երբ Հանձնաժողովը հայտնաբերում հայտարարագիրն օրենքով սահմանված ժամկետում ներկայացված չլինելու դեպք, հարուցում է վարչական վարույթ և նշված վարույթի շրջանակներում կարող է ծանուցել հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձին հայտարարագիր ներկայացնելու պարտավորության մասին: Ընդ որում, և հարուցված վարույթի և հայտարարագիր ներկայացնելու պարտավորության մասին ծանուցումը Հանձնաժողովն իրականացնում է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 41.1 հոդվածի կանոնների պահպանմամբ:

Տվյալ դեպքում Հարություն Հարությունյանը հայտարարագիր ներկայացնելու պարտավորության մասին ծանուցվել է միայն 01.01.2026 թվականին, որին հաջորդել է 08.01.2026 թվականին ստացված ծանուցումը գործի քննության օրվա, ժամանակի և վայրի մասին:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից վարույթ հարուցված լինելու մասին որևէ ծանուցում կամ վարույթ հարուցելու մասին որոշում Հ.Հարությունյանին որևէ կերպ չի հանձնվել:

Ընդ որում, հարկ է նշել, որ 01.01.2026 թվականին էլեկտրոնային փոստի միջոցով ստացված «Ծանուցում հայտարարագիր ներկայացնելու պարտականության վերաբերյալ» վերատառությամբ գրությունը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28 հոդվածի 1-ին մասով սահմանված սանկցիայի կիրառման համար պահանջվող հանգամանքները վրա հասնելու տեսանկյունից չի կարող համարվել պատշաճ ծանուցում, քանի որ չի պարունակում որևէ որոշակի տեղեկություն ծանուցագիրն ուղարկող իրավասու մարմնի վերաբերյալ, ծանուցագրի հասցեատիրոջից իրավասու մարմնի կողմից ակնկալվող վարքագծի վերաբերյալ, տրամադրվող ժամկետների վերաբերյալ, ինչպես նաև պարունակել է ոչ հավաստի տեղեկատվություն ծանուցագրի հասցեատիրոջ իրավական կարգավիճակի վերաբերյալ:

Բացի այդ, 07.01.2026թ. թիվ 01/20-4-2026 ծանուցմամբ նշվել է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից գրավոր ծանուցումը պատշաճ հանձնված համարվելուց հետո 30 օրվա ընթացքում հայտարարագիրը չի ներկայացվել Հանձնաժողով:

Մինչդեռ, ծանուցման բովանդակությունից որևէ կերպ պարզ չի դառնում, թե ի՞նչ գրավոր ծանուցման մասին է խոսքը, ե՞րբ է այն համարվել պատշաճ հանձնված, այն պարագայում, երբ ինչպես նշվեց, Հ.Հարությունյանի կողմից միայն 01.01.2026 թվականին է էլեկտրոնային փոստի միջոցով ստացվել առաջին ծանուցումը հայտարարգիր ներկայացնելու պարտավորության մասին:

Վկայակոչված հիմնավորումներով գտնում ենք, որ տվյալ դեպքում բացակայում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28 հոդվածի 1-ին մասով սահմանված իրավախախտման դեպքը, ինչպես նաև լրացել է նույն հոդվածով սահմանված

խախտման համար պատասխանատվության կիրառման օրենքով սահմանված վաղեմության ժամկետը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:»:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/15/2026 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում, որ.

3.1 Անժելիկա Լաերտի Ղազարյանը պաշտոնատար անձի 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների տվյալները» ենթաբաժնում Հարություն Հարությունյանին ներկայացրել է որպես ամուսին:

3.2 Հարություն Հարությունյանի կողմից Օրենքով նախատեսված Հայտարարագիրը Օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

3.3 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրվա դրությամբ Հայտարարագիրը չի ներկայացվել Հանձնաժողով:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

4.2 Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի օգնական Անժելիկա Լաերտի Ղազարյանի ընտանիքի անդամ Հարություն Գագիկի Հարությունյանը (հիմք՝ Ամուսնության պետական գրանցման մասին 2010 թվականի դեկտեմբերի 18-ի N 889 ակտ) «Հանրային

ծառայության մասին» օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

4.3 Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար:

4.4 Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներն (ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք) են նրա ամուսինը, անչափահաս զավակը (այդ թվում՝ որդեգրված), հայտարարատու պաշտոնատար անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ:

4.5 Նույն հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անդամի, ինչպես նաև սույն հոդվածի 5.1-ին կետով սահմանված դեպքերում հայտարարագրերը սույն օրենքի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանված պահանջների, կարգի և ժամկետների պահպանմամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով չներկայացնելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

4.6 Նույն օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Նշված անձինք պաշտոնավարման ընթացքում տարեկան հայտարարագրերը ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը:

4.7 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագրերը

«Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4.8 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.10 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.11 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.12 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.13 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ

վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.14 Օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում անդրադառնալով վարույթի մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելը** առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով: Այս դրույթից բխում է, որ իրավախախտման առարկան հայտարարագրի ներկայացման պարտականության չկատարումն է ոչ թե «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, այլ Հանձնաժողովի կողմից գրավոր ծանուցվելուց հետո՝ 30 օրվա ընթացքում:

Օրենքով հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը սահմանված է որպես պարտադիր պահանջ, որը գործում է մինչև դրա փաստացի կատարումը և չի սահմանափակվում միայն հայտարարագիր ներկայացնելու վերջնաժամկետի՝ մայիսի 31-ի լրանալով: Նշված ժամկետի լրանալը չի նշանակում պարտականության դադարեցում կամ իրավախախտման ավարտ, այլ արձանագրում է օրենքով սահմանված պարտականության չկատարման սկիզբը: Քանի դեռ հայտարարագիրը փաստացի չի ներկայացվել Հանձնաժողով, հայտարարատու

պաշտոնատար անձը **շարունակում է գտնվել օրենքով սահմանված պարտականության չկատարման վիճակում**:

Միաժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ օրենքով սահմանված պարտականության չկատարումն առաջացնում է բացասական հետևանքներ հանրային շահի տեսանկյունից, քանի որ հայտարարագիր չներկայացնելը խաթարում է հանրային ծառայության թափանցիկության, հաշվետվողականության և վերահսկելիության սկզբունքները: Հետևաբար, Դիրքորոշման մեջ ներկայացված այն պնդումը, թե 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը հայտարարատուի համար օրենքի ուժով սահմանված է եղել մինչև 2024 թվականի մայիսի 31-ը, և նշված ժամկետում չներկայացված հայտարարագրերը Հանձնաժողովը կարող էր պահանջել միայն նշված ժամկետի ավարտից հետո՝ 30 օրվա ընթացքում, և միայն նույն ժամկետում հայտարարատուի կողմից չներկայացնելը կարող էր Օրենսգրքի 169.28 հոդվածի 1-ին մասի իմաստով համարվել իրավախախտում, անհիմն է, քանի որ մայիսի 31-ը հանդիսանում է հայտարարագիր ներկայացնելու վերջնաժամկետ, սակայն այդ ժամկետի խախտումը **չի վերացնում հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը**:

Հակառակը՝ Օրենքով նշված ժամկետից հետո անձի պարտականությունը շարունակում է գործել:

Հանձնաժողովին վերապահված վերահսկողական և կանխարգելիչ լիազորությունները, մասնավորապես հայտարարագրի ինստիտուտը միտված է հանրային ծառայության թափանցիկության և հաշվետվողականության ապահովմանը: Հետևապես, Դիրքորոշման շրջանակներում ներկայացրած մեկնաբանությունն ուղղակիորեն հակասում է Օրենքի և Օրենսգրքի իրավակարգավորումներին՝ ինչպես Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների՝ Օրենքով սահմանված հայտարարագիր ներկայացնելու պարտականության վերաբերյալ ձևական պահանջներին, այնպես էլ՝ այդ պարտականության էությանը:

Դեռ ավելին՝ Հանձնաժողովը, նպատակ ունենալով ապահովել հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց կողմից իրենց պարտականությունների կատարումը, պարբերաբար ծանուցումներ է ուղարկում հայտարարագիր ներկայացնելու

պարտականություն ունեցող անձանց՝ մինչև Օրենքով սահմանված հայտարարագիր ներկայացնելու վերջնաժամկետը՝ յուրաքանչյուր հաջորդ տարվա մայիսի 31-ը՝ այդպիսով նախապես տեղեկացնելով և հիշեցնելով անձին՝ հայտարարագիր ներկայացնելու իր պարտականության մասին: Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցման հիմք է դիտարկում Օրենքով սահմանված հայտարարագիր ներկայացնելու պարտականության մասին Հանձնաժողովի կողմից ծանուցվելուց հետո հայտարարագիրը 30-օրյա ժամկետում չներկայացնելը: Այսպիսով՝ Հանձնաժողովը հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց բազմիցս տեղեկացնում և հնարավորություն է տալիս կատարելու Օրենքով իրենց վրա դրված պարտականությունը: Դեռ ավելին՝ Հանձնաժողովը ձևավորել է դիրքորոշում, ըստ որի՝ նույնիսկ վարչական իրավախախտման առկայության պայմաններում՝ Հանձնաժողովի կողմից ծանուցվելուց հետո 30 օրվա ընթացքում հայտարարագիր ներկայացված չլինելու պայմաններում, եթե հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձը ներկայացնում է Օրենքով սահմանված հայտարարագիրը, Հանձնաժողովը կարճում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը, ինչի մասին վարույթի մասնակիցները պարտադիր ծանուցվում են վարույթի ընթացքում՝ մինչև գործի քննությանը օրը:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ Դիրքորոշումը հակասում է Օրենքով սահմանված հայտարարագիր ներկայացնելու պարտականության էությանը նաև ելնելով ՀՀ վճռաբեկ դատարանի 2024 թվականի հունվարի 9-ի ՎԴ/9333/05/18 որոշման շրջանակներում արտահայտած դիրքորոշումից, որի շրջանակներում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «(...) Քննարկվող պարագայում Հանձնաժողովը, օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացված հայտարարագրերը, օրենքի դրույթների պահպանմամբ, զետեղել է հայտարարագրերի ռեեստրում և հրապարակել է իր պաշտոնական կայքէջում: Միաժամանակ, ունենալով համապատասխան իրավասություն՝ սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացված հայտարարագրերի համար հարուցել վարույթ և հայտարարատու անձին ենթարկել վարչական պատասխանատվության, Հանձնաժողովը չի իրացրել իր լիազորությունը: Մինչդեռ, նշված հանգամանքը **որևէ կերպ չի կարող ազդել հայտարարատու անձի վրա օրենքով դրված**

պարտականությունը թերի կատարելուց կամ այն կատարելուց առհասարակ հրաժարվելուց:[1]

Ավելին, եթե անգամ Հանձնաժողովը հարուցեր համապատասխան վարույթ և հայտարարատու անձին ենթարկեր վարչական պատասխանատվության, ապա նման պարագայում կգործեր Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի դրույթն այն մասին, որ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:» (տե՛ս, Վաչագան Ղազարյանն ընդդեմ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի (իրավահաջորդ՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով) թիվ ՎԴ/9333/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 09.01.2024 թվականի որոշումը): Օրենքի կարգավորումներից և ՀՀ վճռաբեկ դատարանի հիշյալ դիրքորոշումից բխում է, որ հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը զուրկ է վաղեմության ժամկետներից և հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձինք և հայտարարատու պաշտոնատար անձինք այդ պարտականությունից չեն ազատվում՝ անկախ Հանձնաժողովի դրսևորած վարքագծից՝ վերջիններիս գործողությունների վերաբերյալ: Դեռ ավելին, Հանձնաժողովն ընդգծում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված զանցակազմը պետք է մեկնաբանվի հենց վերոգրյալ տրամաբանությամբ և հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի և հայտարարատու պաշտոնատար անձի կողմից Օրենքով սահմանված հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը չկատարելու համար վարչական պատասխանատվությունը վրա հասնի միայն այն բանից հետո, երբ Հանձնաժողովը վերջիններիս պատշաճ ծանուցել է պարտականությունների կատարման անհրաժեշտության վերաբերյալ և ծանուցվելուց հետո 30-օրյա ժամկետում Օրենքով սահմանված հայտարարագիր չի ներկայացվել Հանձնաժողով: Հանձնաժողովը գտնում է, որ հիշյալ մեկնաբանությունը համապատասխանում է Օրենսդրի նպատակին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դիրքորոշումով առաջարկվող մեկնաբանության դեպքում օբյեկտիվորեն հնարավոր չի լինի շատ դեպքերում ապահովել հայտարարատու պաշտոնատար անձանց և հայտարարագիր

[1] Թավ տեքստով միտքը ընդգծվել է Հանձնաժողովի կողմից:

ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց կողմից Օրենքով սահմանված հայտարարագիր ներկայացնելու իրենց պարտականությունը չկատարելու դեպքերի ժամանակին արձանագրումը և այդ ուղղությամբ գործողությունների ձեռնարկումը, ինչը որևէ կերպ չի կարող մեկնաբանվել, որպես նման պարտականության սպառում:

Մասնավորապես, պայմանավորված այն հանգամանքով, որ պաշտոնատար անձանց ընտանիքի անդամների դեպքում Օրենքով սահմանված հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը ծագում է Օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված դեպքերում, այն է՝ հայտարարատու պաշտոնատար անձի ամուսին, անչափահաս զավակ (այդ թվում՝ որդեգրված), հայտարարատու պաշտոնատար անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձ, հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող չափահաս անձ հանդիսանալու հիմքով, ստացվում է մի իրավիճակ, երբ հայտարարատու պաշտոնատար անձինք կարող են Օրենքով սահմանված հայտարարագրում կամ Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց հայտարարագրերի՝ էլեկտրոնային եղանակով լրացման և ներկայացման (հանձնման) էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) «Պրոֆիլ» բաժնում չընդգրկել տվյալներ իրենց ընտանիքի անդամների վերաբերյալ՝ այդպիսով պայմաններ ստեղծելով վերջիններիս՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականությունից խուսափելու համար, քանի որ Համակարգում հայտարարատու պաշտոնատար անձանց ընտանիքի անդամների կողմից հայտարարագիր լրացնելու հնարավորությունը և չլրացված հայտարագրերը ձևավորվում են վերոգրյալ հանգամանքներում:

Այսպիսով, եթե պաշտոնատար անձինք Համակարգի «Պրոֆիլ» բաժնում իրենց ընտանիքի անդամների մասին տվյալները չլրացնեն կամ ներկայացված հայտարարագրերում չներկայացնեն իրենց ընտանիքի անդամի մասին տվյալներ, Հանձնաժողովը հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի կողմից հայտարարագիր ներկայացնելու պարտավորության առկայության մասին կարող է տեղեկանալ համապատասխան պաշտոնատար անձի հայտարարագրում ներկայացված տվյալների ստուգման, այդ թվում՝ որոշ դեպքերում բացառապես օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին դիմելու արդյունքում, ինչը օբյեկտիվորեն հնարավոր չէ իրականացնել Դիրքորոշմամբ առաջարկվող մեկնաբանության ժամկետներում: Ընդ որում՝ Համակարգը

վերոգրյալ տրամաբանությամբ է կառուցվել՝ ելնելով Օրենքի տրամաբանությունից, քանի որ Օրենքն ինքնին **հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի** կողմից հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը և կարգը կապում է **հայտարարատու պաշտոնատար անձի** կողմից հայտարարագիր ներկայացնելու պարտականությանը՝ սահմանելով, որ «հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար»:

Հաջորդիվ անդրադառնալով Դիրքորոշման շրջանակներում վկայակոչված այն հանգամանքներին, թե՝

1. Օրենքը, սահմանելով հայտարարատու պաշտոնատար անձի կողմից հայտարարագիր ներկայացնելու ժամկետները, իսկ պաշտոնատար անձի ընտանիքի անդամի մասով այդ հոդվածը, ինչպես նաև Օրենքի որևէ այլ հոդված, ժամկետ չի սահմանում, ուստի պաշտոնատար անձի ընտանիքի անդամի մասով այդպիսի ժամկետի բացակայության պայմաններում հիշյալ հոդվածով նախատեսված սանկցիան չի կարող կիրառելի լինել պաշտոնատար անձի ընտանիքի անդամի նկատմամբ,

2. հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձը Օրենսգրքի 169.28 հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման բովանդակությունից չի կարող հստակ պատկերացում կազմել, որ որոշակի վարքագիծ դրսևորելու դեպքում նա ենթակա կլինի պատասխանատվության, ուստի նշված նորմը չի կարող համապատասխանել իրավական որոշակիության պահանջին, հետևաբար՝ նաև չի կարող հանդիսանալ պատասխանատվության կիրառման իրավական հիմք՝

Հանձնաժողովն արձանագրում է, որ **հիշյալ դիտարկումները ևս անհիմն են ու հակասում են Օրենքի իրավակարգավորումներին**:

Այսպիսով, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը, որոնցում Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, ինչպես նաև 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորումների համաձայն՝ ներառված են նաև հայեցողական պաշտոն

հանդիսացող՝ դատավորի օգնականի պաշտոնը զբաղեցնող անձինք: Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասերով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող սուբյեկտների շրջանակում ներառված են նաև հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները:

Վերոնշյալից հետևում է, որ Օրենքով ամրագրված իրավանորմերով սահմանված են վարքագծի պարտադիր կանոններ, որոնց համաձայն՝ Հարություն Հարությունյանը, որպես դատավորի օգնականի պաշտոնը զբաղեցնող անձի ընտանիքի չափահաս անդամ, կրում է Օրենքով նախատեսված հայտարարագիրը ներկայացնելու պարտականություն:

Հատկանշական է, որ Վճռաբեկ դատարանը 2024 թվականի հունվարի 09-ին գրավոր ընթացակարգով քննության է առել վերաքննիչ վարչական դատարանի թիվ ՎԴ/9333/05/18 վարչական գործով կայացրած որոշման դեմ Հանձնաժողովի բերած վճռաբեկ բողոքը, որի շրջանակներում անդրադարձել է հայտարարատու անձանց կողմից հայտարարագիր ներկայացնելու պարտավորությանը՝ մասնավորապես, կարևորելով այն հանգամանքը, որ «(...) տարեկան հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը հայտարարատուի մոտ ծագում է օրենքի ուժով, հակառակ պարագայում, ինչպես նշվեց, այդ պարտականությունը չկատարելու համար հայտարարատուն կրում է օրենքով սահմանված պատասխանատվություն (...)»: Ընդ որում, վճռաբեկ ատյանը, հայտարարատու անձանց կողմից հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը, որպես օրենքի իմպերատիվ պահանջ է գնահատել բոլոր հայտարարատու անձանց, այսինքն՝ և՛ պաշտոնատար անձանց, և՛ վերջիններիս ընտանիքի անդամների նկատմամբ:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամները հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրերում ներկայացնում են իրենց գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալներ: Եթե սույն օրենքով սահմանված ժամկետում ընտանիքի անդամները չեն ներկայացնում իրենց գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալներ, ապա համարվում են հայտարարագիր չներկայացրած կամ ժամկետի խախտմամբ ներկայացրած:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար: Ընդ որում, Օրենքի 39-41-րդ հոդվածներով (պաշտոնատար անձանց պարագայում՝ նաև Օրենքի 42-րդ հոդվածով) իմպերատիվ կերպով սահմանված է հայտարարագրման ենթակա տվյալների շրջանակը:

Նույն հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անդամի, ինչպես նաև սույն հոդվածի 5.1-ին կետով սահմանված դեպքերում հայտարարագրերը սույն օրենքի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանված պահանջների, կարգի և ժամկետների պահպանմամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով չներկայացնելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Նույն հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ հայտարարագրի ձևանմուշը սահմանում է Կառավարությունը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկությամբ:

Կառավարության 2020 թվականի հունվարի 30-ի N 102-Ն որոշմամբ սահմանվել է հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրի, հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի և եկամուտների, հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրի օրինակելի ձևերը:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, ինչպես նաև հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Վերոնշյալ իրավանորմերից հետևում է, որ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձը պարտավոր է Կառավարության կողմից սահմանված ձևանմուշին համապատասխան հայտարարագրերը Օրենքով և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի որոշմամբ սահմանված պահանջների, կարգի և ժամկետների պահպանմամբ ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, որպիսի պահանջները պատասխանատու սուբյեկտի կողմից չպահպանելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Սահմանադրության 79-րդ հոդվածով սահմանված իրավական որոշակիության չափանիշին Սահմանադրական դատարանը անդրադարձել է մի շարք որոշումների շրջանակներում, այսպես՝ 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշման շրջանակներում Սահմանադրական դատարանը, ամփոփելով իրավական որոշակիության պահանջի վերաբերյալ մոտեցումները, արձանագրել է, որ «1) « .... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը» (ՍԴՈ-630),

2) «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը:

Օրենքի կանխատեսելիությունը գնահատելու համար կարևոր գործոն է նաև տվյալ հարաբերությունները կանոնակարգող տարբեր կարգավորումների միջև հակասությունների առկայության կամ բացակայության հանգամանքը» (ՍԴՈ-753),

(...)

4) «Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը» (ՍԴՈ-1148),

5) «ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի» (ՍԴՈ-1270),

6) «Մի շարք այլ որոշումների (ՍԴՈ-630, ՍԴՈ-1142) համատեքստում, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, Սահմանադրական դատարանը գտել է, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները **ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում**[2]» (ՍԴՈ-1439),

7) Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

(...)

Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ Սահմանադրական դատարանն իր որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ առ այն, որ,

[2] Թավ տեքստով միտքը ընդգծվել է Հանձնաժողովի կողմից:

մասնավորապես, որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը (ՍԴՈ-630), վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում (ՍԴՈ-753), օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության (ՍԴՈ-1176, ՍԴՈ-1449),

8) « .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է ինչպես հնարավորինս հստակ իրավակարգավորման առկայություն, այնպես էլ դրա կանխատեսելիության ապահովում: Մասնավորապես, իրավակարգավորման ձևակերպումը պետք է հնարավորություն տա անձին ոչ միայն դրան համապատասխան ձևավորելու իր վարքագիծը, այլև կանխատեսելու, թե ինչպիսի՞ն կարող են լինել հանրային իշխանության գործողությունները, և ի՞նչ հետևանքներ կառաջանան տվյալ իրավակարգավորման կիրառման արդյունքում:

.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի որոշակիության պահանջ նախատեսելով հանդերձ՝ հնարավոր չէ բոլոր հարցերի կարգավորումը նախատեսել բացառապես օրենքով, այդ պատճառով այս հարցում կարևորվում է հատկապես դատական ատյանների կողմից օրենքի հստակ մեկնաբանությունը:

(...)

9) «Սահմանադրական դատարանն իր՝ 2015 թվականի հունիսի 9-ի ՍԴՈ-1213 որոշմամբ հայտնել է, որ «....իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ» (ՍԴՈ-1475):

Վերահաստատելով և զարգացնելով իր իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է.

(...)

5) հիմնական իրավունքները կամ ազատությունները սահմանափակող օրենքների հստակությունը, կանխատեսելիությունը և մատչելիությունն ուղիղ համեմատական են հիմնական իրավունքի սահմանափակման աստիճանին. որքան ավելի ինտենսիվ է այդ սահմանափակումը, այնքան ավելի հստակ, կանխատեսելի և մատչելի պետք է լինեն հիշյալ օրենքների ձևակերպումները, որպեսզի երկիմաստություն չառաջացնեն մասնավոր անձանց համար արգելքների, այլ սահմանափակումների կամ նրանց վրա դրված պարտականությունների առկայության և բովանդակության հարցում,

6) հաշվի առնելով կենսական հարցերի բազմազանությունը և նորմաստեղծ ճանապարհով բոլոր իրավիճակներին արձագանքելու անհնարինությունը՝ օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավորումների որոշակիության պահանջը չի բացառում անորոշ իրավական հասկացությունների ամրագրումն օրենքներում և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում, սակայն այն պարտադիր պետք է ուղեկցվի նման հասկացությունների համարժեք, իսկ նույնական դեպքերում՝ միատեսակ մեկնաբանությամբ, առանց որի անհնարին կլինի փաստել այդ դրույթների կանխատեսելիությունը,

(...)»:

Իրավական որոշակիության սկզբունքին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը անդրադարձել է մի շարք որոշումներով, մասնավորապես, Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի որոշման շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, (Case of Busuioc v. Moldova, application no. 61513/00, 21/12/2004) «...որ թեև օրենքում որոշակիությունը **մեծապես ցանկալի է, սակայն դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին**[3]: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է»:

Համակարգային վերլուծության ենթարկելով վերոգրյալ իրավակարգավորումները, Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական

[3] Թավ տեքստով միտքը ընդգծվել է Հանձնաժողովի կողմից:

դիրքորոշումները՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսդիրը Օրենքով սահմանել է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն հայտարարատու պաշտոնատար անձի և հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց համար: Ընդ որում՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց պարտականությունը ուղղակիորեն կապվել է հայտարարատու պաշտոնատար անձանց պարտականության հետ՝ այդպիսով ընդգծելով, որ որևէ մեկը կարող է լինել հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ միայն այն դեպքում, երբ առկա է հիմնական պարտականություն կրող անձը՝ հայտարարատու պաշտոնատար անձը, և նույն տրամաբանությամբ՝ եթե որևէ պաշտոնատար անձ չի կրում հայտարարագիր ներկայացնելու պարտականություն՝ բացառվում է վերջինիս ընտանիքի անդամի համար հայտարարագիր ներկայացնելու պարտականության առկայությունը:

Հիշյալ տրամաբանությունից ու հայտարարատու պաշտոնատար անձի և հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց միջև առկա կապի բնույթից ելնելով՝ Օրենսդիրը սահմանել է միատեսակ մոտեցում նաև հայտարարագիր ներկայացնելու ժամկետների վերաբերյալ՝ սահմանելով, որ «Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար»: Այսպիսով, Օրենքով սահմանված իրավակարգավորումներից պարզ է դառնում, որ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներն իրենց հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը պարտավոր են կատարել **հայտարարատու պաշտոնատար անձի կողմից հայտարարագիր ներկայացնելու պարտականության համար սահմանված կարգով և ժամկետներում**: Ընդ որում, անձնական պատասխանատվության սկզբունքի հաշվառմամբ, ինչպես նաև պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամի հայտարարագրերի բովանդակության տարբերության պատճառով, տեխնիկական լուծումների միջոցով ներկայում ապահովվել է հայտարարատու անձանց առանձին ծանուցումը և հայտարարագիրը միմյանցից անջատ տալու հնարավորությունը: Ընդ որում, հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց հայտարարագիր

ներկայացնելու պայմանների, այդ թվում՝ ժամկետների հետ կապված հարցերը ընտրված մոդելով կարգավորելը բխում է այն հստակ տրամաբանությունից, որ հայտարարատու պաշտոնատար անձանց պարտականությունն է այն հիմնական պարտականությունը, որից ածանցվում է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց պարտականությունը, հետևաբար՝ դրանց մասով **առանձին** իրավակարգավորումներ սահմանելը կլիներ աննպատակահարմար և անհիմն կառաջացներ շփոթմունք՝ **արհեստականորեն բաժանելով հայտարարատու պաշտոնատար անձի և հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց կողմից Օրենքով սահմանված ժամկետում Հանձնաժողով ներկայացման ենթակա հայտարարագրերի միջև առկա տրամաբանական կապը**, իսկ հակառակ մոտեցման դեպքում Օրենսդիրը ստիպված կլիներ դրսևորել անհիմն կոշտություն՝ իրավական ակտերի ձևակերպման տեսանկյունից և հայտարարատու պաշտոնատար անձանց համար սահմանված կանոնների փոփոխության յուրաքանչյուր դեպքում ստիպված կլիներ կրկնվող փոփոխություններ սահմանել նաև վերջիններիս հետ կապված հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց համար:

Հետևաբար, քննարկվող նորմերը չեն կարող կամայականորեն մեկնաբանվել այնպես, որ հայտարարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամը չի կրում Օրենքով սահմանված հայտարարարագիր ներկայացնելու պարտականություն՝ հատկապես այն պայմաններում, երբ օրենսդիրը հայտարարագրմանն առնչվող խախտումների համար ինչպես վարչական (Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.28-րդ հոդված), այնպես էլ քրեական (ՀՀ քրեական օրենսգրքի 444-րդ հոդված) պատասխանատվություն սահմանելիս ամրագրել է «հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ» եզրույթը: Ավելին, մինչև 2020 թվականի մայիսի 2-ը գործող խմբագրությամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասը պարունակել է «Հայտարարատու պաշտոնատար անձի, ինչպես նաև նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի կողմից (սույն հոդվածում այսուհետ՝ հայտարարատուներ) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հայտարարագրերը»» նախադասությունը,

միաժամանակ, մինչև 2020 թվականի մայիսի 2-ը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 314.2-րդ և 314.3-րդ հոդվածները ևս պարունակել են «Հայտարարատու պաշտոնատար անձի, ինչպես նաև նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հայտարարագրերը» եզրույթը: Գործող իրավակարգավորումների համաձայն հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց շրջանակն ընդլայնվել է՝ հայտարարատու պաշտոնատար անձից և նրա ընտանիքի անդամից (նախկին խմբագրությամբ՝ ընտանիքի կազմի մեջ մտնող անձ) բացի ընդգրկելով նաև Օրենքով սահմանված այլ անձանց (հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ), այդ պատճառով օրենսդիրը վերոնշյալ օրենքներում օգտագործում է «հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ» եզրույթը: Նշենք նաև, որ Սահմանադրական դատարանն իր 2019 թվականի ապրիլի 16-ի ՍԴՈ-1453 որոշմամբ, անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 314.3-րդ հոդվածով (2003 թվականի ապրիլի 18-ի ՀՀ քրեական օրենսգրքի) նախատեսված հանցակազմին, արձանագրել է, որ օրենսգրքի 314.3-րդ հոդվածի 2-րդ մասը քրեական պատասխանատվություն է սահմանում հայտարարատու պաշտոնատար անձի, ինչպես նաև նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի կողմից Օրենքով նախատեսված հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու համար, որը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերով գույքի կամ եկամտի չհայտարարագրմանը:

Ելնելով հայտարարագրման ինստիտուտի իրավական նշանակությունից (կոռուպցիայի կանխարգելում, հանրային հաշվետվողականության ապահովում, կոռուպցիոն ռիսկերի ժամանակին բացահայտում և այլն) ակնհայտ է, որ օրենսդիրը ինչպես հայտարարագիրը ներկայացնելու կարգի, այնպես էլ ժամկետների առումով նույնանման պահանջեր է սահմանել թե՛ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն նախատեսող պաշտոն զբաղեցնող անձի, թե՛ Օրենքի իմաստով վերջինիս ընտանիքի անդամների համար:

Վերոնշյալի համատեքստում հարկ է շեշտել նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ), Քսոքսաջն ընդդեմ Ալբանիայի գործով (XHOXHAJ v ALBANIA, դիմում no. 15227/19, 31.05.2021 թվականի վճիռ, § 349) նշել է հետևյալը.

«(...) Դատարանը կարծում է, որ հաշվի առնելով, որ անձնական կամ ընտանեկան ակտիվները սովորաբար կուտակվում են աշխատանքային գործունեության ամբողջ ընթացքում, ակտիվների ուսումնասիրման համար ժամանակային խիստ սահմանափակումներ նախատեսելը մեծապես կսահմանափակի և կխոչընդոտի իշխանություններին՝ ուսումնասիրել վեթինգի ենթարկվող անձի կողմից իր մասնագիտական գործունեության ընթացքում ձեռք բերված ընդհանուր ակտիվների օրինականության հարցը:»:

Նկատի ունենալով, որ ՄԻԵԴ-ը որևէ կերպ չի քննարկում ընտանեկան ակտիվների ուսումնասիրության իրավաչափությունը, հակառակը՝ շեշտում է այդ ուսումնասիրության համար ժամանակային խիստ սահմանափակումների նախատեսման աննպատակահարմարությունը՝ կարելի է եզրակացնել, որ անձի գույքային դրության վերլուծությունն արդյունավետ իրականացման նախապայմաններից է վերջինիս **գույքային դրությունը և դրա վերլուծությունն իր ընտանիքի հետ համամասնությամբ դիտարկելը**:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց, այդ թվում՝ հայտարատու պաշտոնատար անձի ամուսնու կարգավիճակ ունեցող անձանց համար սահմանել է կանխատեսելի, հստակ և որոշակի պարտականություններ, այդ թվում՝ հայտարարագիր ներկայացնելու ժամկետների մասով, այն է՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձինք հայտարարագրերը ներկայացնում են նույն կարգով և ժամկետներում, ինչ հայտարարատու պաշտոնատար անձինք: Միևնույն ժամանակ Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում ընդգծել, որ վարչական իրավախախտում առկա է միայն այն ժամանակ, երբ հայտարարատու պաշտոնատար անձը կամ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձը Հանձնաժողովի կողմից ծանուցվելուց հետո 30-օրյա ժամկետում չեն ներկայացնում Օրենքով սահմանված հայտարարագիրը, ինչը ինքնին էականորեն առավել բարենպաստ մոտեցում է վերջիններիս համար: Նման իրավակարգավորման պայմաններում վերջիններիս կողմից Օրենքով սահմանված պարտականության չկատարումը ինքնին չի համարվում վարչական իրավախախտում և միայն Հանձնաժողովի կողմից հայտարարագիր ներկայացնելու ժամկետի լրանալուն նախորդող ծանուցումներից բացի ևս մեկ անգամ ծանուցվելուց հետո հակահիրավական վարքագիծը շարունակելը և երեսուն օրվա ընթացքում Օրենքով սահմանված

հայտարարագիրը Հանձնաժողով չներկայացնելը կհամարվի զանցանք և կհանգեցնի համապատասխան իրավական հետևանքների:

Վերոգրյալ փաստական և իրավական հանգամանքների հիման վրա Հանձնաժողովն արձանագրում է, որ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի օգնական Անժելիկա Լաերտի Ղազարյանի ընտանիքի անդամ Հարություն Գագիկի Հարությունյանը Հայտարարագիրը Օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա Հանձնաժողով չի ներկայացրել, այն է թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանք:

Միաժամանակ անդրադառնալով Դիրքորոշման մեջ առկա այն փաստարկին, որ Հարություն Հարությունյանի ծանուցումը՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականության առկայության մասին կատարվել է ոչ պատշաճ ընթացակարգով, հարկ է արձանագրել, որ Հանձնաժողովը սահմանված կարգով և իր լիազորությունների շրջանակում ծանուցել է Հարություն Հարությունյանին Հայտարարագիրը ներկայացնելու պարտականության մասին՝ առաջնորդվելով «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի՝ մինչև 2026 թվականի հունվարի 1-ը գործած խմբագրության կարգավորումներով՝ ապահովելով վերջինիս՝ ծանուցումը ստանալուց հետո Հայտարարագիրը 30-օրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնելու, իսկ չներկայացնելու դեպքում՝ 31-րդ օրը վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը մասնակցելու, դիրքորոշում ներկայացնելու և իր իրավունքները իրացնելու լիարժեք հնարավորությունը: Հետևաբար, Դիրքորոշման շրջանակներում մատնանշած հանգամանքն առ այն, որ Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցված լինելու մասին որևէ ծանուցում վերջինիս չի ուղարկվել, չի կարող ընդունվել որպես իրավաչափ և հիմնավոր:

Ինչ վերաբերում է վարչական վարույթ հարուցելու մասին առանձին որոշման կայացմանը, ապա հարկ է նկատել, որ վարչական վարույթի հարուցումն ազդարարող իրավակարգավորումները սահմանված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածով, որի 1-ին մասի համաձայն՝ Վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ ա) անձի դիմումը, բողոքը. բ) վարչական մարմնի նախաձեռնությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքերում վարչական վարույթը հարուցվում է այն գործողության (գործողությունների) սկսման օրվանից, որը նպատակամղված է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտի ընդունմանը:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ սույն վարույթի հարուցման հիմք է հանդիսացել Հանձնաժողովի նախաձեռնությունը, ուստի վարույթի հարուցումն ազդարարող փաստական տվյալը, տվյալ դեպքում հանդիսանում է Հանձնաժողովի՝ սույն վարչական ակտի ընդունմանն ուղղված գործողությունը, այսինքն՝ Հանձնաժողովի 2026 թվականի հունվարի 05-ի ՎԻՎ 526/25 արձանագրությունը, որի վերաբերյալ Հարություն Հարությունյանը եղել է պատշաճ ծանուցված: Նշված պայմաններում անհիմն է դառնում վերջինիս փաստարկն առ այն, թե ինքը ծանուցված չի եղել վարչական վարույթի հարուցման մասին:

Հանձնաժողովն արձանագրում է, որ նման ակտ չի կայացնում, նկատի ունենալով, որ Հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 01/4354/19-2025 գրությունն արդեն իսկ բովանդակել է Հանձնաժողովի՝ վարչական ակտի ընդունմանն ուղղված գործողության հետագա նախաձեռնման մասին, ինչի վերաբերյալ էլ Հարություն Հարությունյանը համարվել է օրենքով սահմանված կարգով պատշաճ ծանուցված: Միևնույն ժամանակ, Օրենքով սահմանված՝ անհատական ծանուցումն անձին ուղարկելու հստակ գործողություններից զատ Հանձնաժողովի աշխատակազմը մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու պահը, մասնավորապես՝ 2025 թվականի դեկտեմբերի 30-ին՝ ժամը 09.36-ին, ևս մեկ անգամ կատարել է հեռախոսազանգ (ձայնագրությունը պահպանվել է) Հարություն Հարությունյանի՝ հայտարարագրման էլեկտրոնային համակարգում գրանցված անձնական բջջային [redacted] հեռախոսահամարին, հերթական անգամ ծանուցելով և հիշեցնելով հայտարարագիր ներկայացնելու պարտականության և վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու մասին, որի ընթացքում հայտարարատուն հստակ հայտնել է, որ որոշել է հայտարարագրերը չլրացնել:

Հանձնաժողովը գտնում է, որ խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել՝ արդյոք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս

առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը: Տվյալ դեպքում Անժելիկա Լաերտի Ղազարյանն իր 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների տվյալները» ենթաբաժնում Հարություն Գագիկի Հարությունյանին ներկայացրել է որպես պաշտոնատար անձի՝ ամուսին: Նշվածից հետևում է, որ Հարություն Հարությունյանը՝ որպես հայտարարատու պաշտոնատար անձի ամուսին, կրել է պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագիր ներկայացնելու պարտականություն:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ: Սույն դեպքում, Օրենսդրի կողմից սահմանված պահանջների կատարումը նպատակ ունի ապահովել հայտարարատու անձի հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը, որը, տվյալ դեպքում խաթարվել է՝ Հարություն Հարությունյանի կողմից Հայտարարագիր չներկայացնելու արդյունքում: Մասնավորապես, Հարություն Հարությունյանի կողմից Հայտարարագիր չներկայացնելու արդյունքում պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամի ընդհանուր գույքային դրությունը, Հանձնաժողովին և հանրությանը հասանելի չի դարձել, ինչը վտանգում է Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով պաշտպանվող հասարակական շահը:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող, ինչպես նաև 33-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող որևէ հանգամանք:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով,

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Հարություն Գագիկի Հարությունյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ ***200 000 ՀՀ դրամի չափով:***

2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին***՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հարություն Գագիկի Հարությունյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**